Հայ–ադրբեջանական նոր երկխոսության թեմատիկ խմբեր

Խաղաղության և անվտանգության թեմատիկ խմբի զեկույց

Լեոնիդ Ներսիսյան (համանախագահող, Հայաստան)

Մուրադ Մուրադով (համանախագահող, Ադրբեջան)

This is an informal translation of the report. The authoritative text is the English version agreed by the Armenian and Azerbaijani members of the thematic group, as published on commonspace.eu.

Սա զեկույցի ոչ պաշտոնական թարգմանությունն է: Պաշտոնական տեքստը անգլերեն տարբերակն է, որը համաձայնեցվել է թեմատիկ խմբի հայ և ադրբեջանցի անդամների կողմից և հրապարակվել commonspace.eu կայքում:

Նոյեմբեր, 2025 թ.

Նախաձեռնող՝ Լինքս Եվրոպա (ԵՄ-ն հանուն խաղաղության 3 ծրագրի շրջանակում)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ

Ամսաթիվ՝ Նոյեմբեր, 2025 թ.

Նախաձեռնող՝ Լինքս Եվրոպա (ԵՄ-ն հանուն խաղաղության 3 ծրագրի շրջանակում)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ

Խաղաղության և անվտանգության թեմատիկ խումբ

Հեղինակներ Հայաստանից

Լեոնիդ Ներսիսյան (համանախագահ)

Արմինե Մարգարյան

Սերգեյ Մելքոնյան

Վարդուհի Հարությունյան

Էդուարդ Բաղդասարով

Հեղինակներ Ադրբեջանից

Մուրադ Մուրադով (համանախագահ)

Էլդար Համզալի

Գուլխանիմ Մամադովա

Հուսեին Սուլթանլի

Ալիհուսեին Գյուլուզադե

Խաղաղության և անվտանգության թեմատիկ խմբի զեկույց

Ներածություն

Այս զեկույցը հայ և ադրբեջանցի փորձագետների համատեղ ջանքերի արդյունքն է, որի նպատակն է բացատրել խաղաղությանն ու անվտանգությանն առնչվող հիմնական խնդիրների վերաբերյալ կողմերի դիրքորոշումներն ու ընկալումները: Զեկույցը տալիս է քաղաքական խորհուրդներ և առաջարկում քայլեր, որոնք կարող են Հայաստանին և Ադրբեջանին մոտեցնել կայուն և համապարփակ խաղաղությանը:

Հայաստանն ու Ադրբեջանը բեկում են գրանցել հարաբերությունների կարգավորման հարցում: ԱՄՆ միջնորդությամբ 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում երկու կողմերը նախաստորագրեցին խաղաղության համաձայնագիրը և ստորագրեցին Համատեղ հռչակագիր: Համաձայնագրի տեքստը վերջնականացվել էր 2025 թվականի մարտին, բայց կարևոր է ընդգծել, որ համաձայնագիրը նախաստորագրվել է, այլ ոչ պաշտանապես ստորագրվել: Հռչակագիրը ոչ միայն ընդգծեց ԱՄՆ առաջատար դերը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հարցում, այլև պաշտոնականացրեց համաձայնությունները Թրամփի ուղի (Միջազգային խաղաղության և բարօրության Թրամփի ուղի) ստեղծելու վերաբերյալ: Այս հաղորդուղին Երևանի և Բաքվի միջև առանցքային վիճելի կետերից մեկն էր:

Այս զեկույցի նպատակը խաղաղության համաձայնագրի իրագործման հիմնական խոչընդոտները, ռիսկերն ու հնարավորություններն ուրվագծելն է: Հաշվի առնելով նախագծի երկկողմ բնույթը՝ երկու կողմն էլ ոչ միայն կներկայացնի իր դիրքորոշումը, այլև կմեկնաբանի մյուսի տեսակետները:

Հայաստանի և Ադրբեջանի դիրքորոշումները

Կողմերը համամիտ են, որ Վաշինգտոնի հանդիպումը զգուշավոր լավատեսություն է բերել. Ադրբեջանը և Հայաստանը ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունը և հայտարարել, որ հակամարտությունն

ավարտված է: Առաջին անգամ և՛ Բաքուն, և՛ Երևանը համարում են, որ երկարատև խաղաղությունն առավել շահեկան է, քան ստատուս քվոն:

Ադրբեջանական կողմի տեսանկյունից խաղաղության համաձայնագրի ստորագրման հիմնական խոչընդոտը Հայաստանի Սահմանադրությունն է, Հայաստանի տեսանկյունից խոչընդոտը հենց Բաքվի պահանջն է:

Հայկական կողմի տեսանկյունից այս պահանջն անհիմն է երեք պատճառով: Նախ՝ Հայաստանի կառավարությունը կառուցողական մոտեցում է ցուցաբերել խաղաղության համաձայնագրի հարցում, որը երկրի ներսում հաճախ քննադատվում է որպես չափազանց փափուկ մոտեցում: Ավելին, սահմանադրական բարեփոխումները պահանջում են հանրաքվե, և Բաքվի նախապայմանը, որը նախկին 30 տարում գոյություն չի ունեցել, հղի է վտանգով, որ բացասական քվեի դեպքում կարող է սառեցնել խաղաղության գործընթացը: Երկու՝ սահմանադրական փոփոխությունների պահանջը հակասում է նախաստորագրված համաձայնագրի 5-րդ հոդվածին, որն արգելում է միջամտությունը ներքին գործերին: Եթե վավերացվի, համաձայնագիրն ինքը վերազանցելու է տեղական օրենսդրությանը, և նման պնդումները կիմաստազրկվեն: Ի լրումն՝ Բաքվի մտահոգությունները տեղին չեն, քանի որ թե՛ նախաստորագրված համաձայնագիրը և թե՛ Սահմանադրական դատարանի վճիռը չեղարկում են այդ պահանջը:

Ադրբեջանի տեսակետից՝ Հայաստանի Սահմանադրությունը Ադրբեջանի դեմ տարածքային պահանջներ է պարունակում, քանի որ Սահմանադրության նախաբանը հղում է անում 1990 թվականի Անկախության հռչակագրին: Սա վտանգում է երկարատև խաղաղության հեռանկարը՝ շարունակաբար Ադրբեջանի ժողովրդի աչքում կասկածի ենթարկելով խաղաղության համաձայնագրի լեգիտիմությունը:

Երկրորդ մարտահրավերը պատմության և ինքնության հակասող մեկնաբանությունն է, որը խաթարում է վստահությունը:

Հայաստանի տեսակետից՝ անվստահությունը ծագում է երկու խնդրից: Նախ՝ «Արևմտյան Ադրբեջան» նախագծի պետական մակարդակով քարոզչությունը, որը Հայաստանի հասարակությունը ընկալում է որպես աշխարհաքաղաքական էքսպանսիոնիզմի գործիք և մինչև անգամ տարածքային պահանջ: Երկու՝ պատերազմի արդյունքում Ադրբեջանում

պահվող հայ գերիների վերադարձի մերժումը էլ ավելի է խորացնում անվստահությունը: Երրորդ՝ Ադրբեջանի շարունակական միլիտարիզացիան այն դեպքում, երբ Հայաստանը կրճատում է ռազմական ծախսերը: Հասարակության մի մասը մտահոգ է, որ Ադրբեջանը կվերսկսի ռազմական գործողությունները, եթե ապագայում հարմար պահ ու պայմաններ լինեն: Վերը թվարկված պատճառներով Հայաստանը Բաքվից կոնկրետ քայլեր է սպասում, որոնք իրական անվտանգության երաշխիք կտան և կվկայեն ապագայում խաղաղասիրական մտադրությունների մասին:

Ադրբեջանը համամիտ է, որ վստահությունը դեռ փխրուն է այս և այլ հարցերի պատճառով, բայց Բաքվի տեսակետից՝ «Արևմտյան Ադրբեջանը» արտահայտում է տեղահանված ադրբեջանցիների պատմական իրավունքները, այլ ոչ Ադրբջանի էքսպանսիոնիստական մտադրությունը: Նախկին «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից» 23 անձը, որոնք այժմ դատվում են, դիտարկվում են ոչ թե իբրև ռազմագերի, այլ կոնֆլիկտի ժամանակ հանցանքներ գործած անձինք: Ադրբեջանի՝ ավելացող ռազմական ծախսերը դիտարկվում են որպես ազգային անվտանգության ու զսպման լեգիտիմ միջոց, հաշվի առնելով բարդ հարևան միջավայրն ու ավելացող աշխարհաքաղաքական անկայունությունը. Բաքուն նաև պլանավորում է առաջիկա տարիներին որոշ չափով կրճատել ռազմական բյուջեն: Ադրբեջանի տեսակետից՝ իրական խաղաղության համար անհրաժեշտ են ամուր երաշխիքներ ռևանիշիզմի դեմ և Հայաստանում կայուն, խաղաղասիրական կոնսենսուս:

Երկու կողմն էլ համամիտ է, որ խաղաղության համաձայնագրի նախաստորագրումը զգալի կրճատել է էսկալացիայի վտանգը: Վերջին հինգ տարվա ընթացքում երկու երկրները ոչ թե սառեցված հակամարտության, այլ ակտիվ փուլերի միջով են անցել: Հիմա՝ գոնե կարճաժամկետում, այդ հեռանկարը կասեցվել է: Այս զարգացումը բնականաբար ավելացնում է Հայաստանի տնտեսական գրավչությունը և առաջիկա տարիներին ավելացնում կայունությունը: Ավելին, խաղաղության գործընթացում առաջընթացը բացում է հայ-թուրքական կարգավորման դուռը: Լիարժեք կարգավորումը բարդ է, քանի դեռ Երևանի և Բաքվի միջև չի ստորագրվել խաղաղության համաձայնագիրը, բայց կա հաղորդուղիների աստիճանական բացման հեռանկար:

Երկու կողմի տեսակետից էլ խաղաղության համաձայնագրի ստորագրումն ու իրագործումը կնպաստի արդար և երկարատև խաղաղությանը, քանի որ համաձայնագիրն ավելի հեռուն է գնում, քան բռնությանը վերջ դնելն է: Այն նաև պարտավորեցնում է հաստատել երկկողմ հարաբերություններ (հոդված V), կառուցել վստահություն սահմանի երկայնքով (հոդված VII), պայքարել անհանդուրժողականության և ծայրահեղականության դեմ (հոդված VIII) և հաստատել հնարավոր ոլորտային համագործակցություն (հոդված X): Այն հնարավորության պատուհան է բացում կայունության, տնտեսական աճի ու հաղորդակցության համար: Բայց իսկական փորձությունը իրագործումն է. հանձնառությունը կայուն փոխվստահության վերածելը: Մինչև ժամանակ կառուցվածքային մտահոգությունները պահպանվում են, դրանց թվում՝ խորը նստած ատելության նարատիվներ, վստահության պակաս, ապագա համագործակցության իրավական ու քաղաքական գործիքների բացակայություն: Եթե չհասցեագրվեն, այս խնդիրները խաղաղության գործընթացը դարձնում են փխրուն ու մակերեսային:

Թրամփի ուղին բերում է թե՛ հնարավորություններ, թե՛ ռիսկեր: Երկու հիմնական ռիսկ կարելի է շեշտադրել: Նախ՝ բազմաթիվ իրավական, տեխնիկական, ֆինանսական հարցերը, որոնք դեռ պետք է հասցեագրել, երկարաձգում են նախագծի իրագործումը: Երկրորդ՝ Իրանը և Ռուսաստանը զգուշավորությամբ են մոտենում Հայաստանի տարածքում՝ այս ճանապարհի երկայնքով ամերիկյան ներկայությանը: Այս մտահոգությունները սնում են տարաձայնություններ՝ ճնշելով ավելի շատ Երևանին, քան նախագծի շահառու այլ կողմերի:

Տարածաշրջանային և միջազգային հարթություն

Խաղաղության համաձայնագիրն ու Թրամփի ուղին վերաձևում են տարածաշրջանը, և սա անխուսափելի անդրադառնում է հարևան պետությունների շահերի վրա: Տարածաշրջանային ուժերը՝ Իրան, Ռուսաստան, Թուրքիա, և՛ դրական, և՛ բացասական գործոններ են տեսնում, որոնք կարող են ազդել պայմանավորվածությունների իրագործման վրա:

Ռուսաստանի մոտեցումը կարգավորմանը երկակի է: Մի կողմից Մոսկվան ողջունում է տարածաշրջանային կայունությունը, որը չի պահանջում իր անմիջական ներգրավվածությունը՝ հաշվի առնելով Ուկրաինայում պատերազմի բեռը: Այս տեսակետից Թրամփի ուղու նման նախաձեռնությունը կարող է անգամ նպաստել Ռուսաստանի շահերին՝ երկաթուղային ուղի ապահովելով դեպի Հայաստան, մինչդեռ Վրաստանով տարանցումը փակ է: Մյուս կողմից՝ Վաշինգտոնի գագաթնաժողովը խարխլել է ուսական մենաշնորհն ու գերակա դիրքը տարածաշրջանում: Հայաստանի, Ադրբեջանի ու Թուրքիայի միջև շարունակվող կարգավորումը սպառնում է էլ ավելի նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը և ռազմական ներկայությունը Հայաստանում:

Ավելին, ներկայիս պայմանավորվածությունները հակասում են 2020 թվականի նոյեմբերի եռակողմ հայտարարությանը, որը նախատեսում էր ռուսական վերահսկողություն հաղորդուղիների նկատմամբ՝ որը պիտի իրագործեր ռուսական ԱԴԾ սահմանապահ ծառայությունը: Թեև Մոսկվան պահպանում է տնտեսական լծակները, որոնց միջոցով կարող է խոչընդոտել իրագործմանը, Արևմուտքի հետ շարունակվող լարվածությունն ու Ուկրաինայում հնարավոր հեղնթացը աստիճանաբար նվազեցնում է տարածաշրջանային հարցերում գերիշխելու նրա կարողությունը:

Իրանի դիրքորոշման մեջ առկա են թե՛ ռազմավարական, թե՛ պրագմատիկ մտահոգություններ: Իրանը զգուշանում է իր սահմանների մոտ անկայունության հավանականությունից, բայց Իրանի առաջնային անհանգստությունը Թրամփի ուղիում ամերիկյան ներգրավվածությունն է ու դրա պոտենցիալ ազդեցությունը Հայաստանի հետ սահմանին առևտրի վրա: Երևանին հաջողվել է վստահեցնել Թեհրանին, որ առևտուրը կշարունակվի, ինչը չի կարելի ասել ամերիկյան ընկերությունների կամ ներկայացուցիչների ներկայության մասին, որը Իրանը դիտարկում է որպես անընդունելի: Չնայած Բաքվի հավաստիացումներին՝ Թեհրանը վախենում է, որ Թրամփի ուղին կվնասի իր՝ «Արաքսի միջանցքի» ռազմավարական ու տնտեսական նշանակությանը, որը կապում է Ադրբեջանը իր էքսկլավի՝ Նախիջևանի հետ: Այս հարցերը կարող են ազդել Թրամփի ուղու վերջնական ձևաչափի ու կոմունիկացիոն մոդելների վրա: Բացի այդ, Իրանին մտահոգում է Ադրբեջանի սերտ համագործակցությունը Իսրայելի հետ, որը ավելացնում է

տարածաշրջանային շրջապատման իր ընկալումը և ավելի լայն աշխարհաքաղաքական անվստահություն բորբոքում:

Թուրքիան Հարավային Կովկասի փոփոխվող հավասարակշռության գլխավոր շահառուն է: Ուղիղ կամ անուղղակի ներգրավված լինելով բոլոր խոշոր պայմանավորվածությունների ձևավորմանը, Անկարան ազդել է և ուշադիր հետևել բանակցությունների ընթացքին: Խաղաղության համաձայնագրի ստորագրումը կվերացներ Թուրքիա-Հայաստան կարգավորման խոչընդոտները և թույլ կտար բացել սահմանը: Դա և Թրամփի ուղու իրագործումը միասին կամրապնդեր Թուրքիայի դերը՝ իբրև խոշոր տրանսպորտային հանգույցի, որը կապում է Եվրոպան Կենտրոնական Ասիային և ընդարձակում մատչումը տարածաշրջանային շուկաներին: Հետևաբար Անկարան Թրամփի ուղին տեսնում է իբրև ռազմավարական հնարավորություն, բայց շարունակում է Հայաստանի հետ լիարժեք կարգավորումը կապել Երևան-Բաքու տրեկի հետ:

Եվրոպական Միությունը ևս շահելու է խաղաղության համաձայնագրից և տարածաշրջանային կոմունիկացիաների բացումից: Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան երթուղին էլ ավելի կընդլայնի Միջին Միջանցքի ներուժը ու ԵՄ–ին Կենտրոնական Ասիա տանող այլընտրանքային դարպաս կտրամադրի: Բայց սա իրականություն դարձնելու համար ԵՄ-ն ու նրա ֆինանսական հաստատությունները պիտի մասնակցեն Թրամփի ուղու իրագործմանը, ինչպես նաև այլ՝ Թուրքիա-Հայաստան և Հայաստան-Ադրբեջան կապուղիներին: Միևնույն ժամանակ Բրյուսելը և Վաշինգտոնը պիտի մնան ակտիվ ներգրավված համաձայնություններն առաջ մղելու հարցում ոչ միայն պրոցեսն ուշադիր մոնիտորինգի ենթարկելով, այլև ուղիղ նպաստելով դրան: Առանց ներգրավվածության՝ վերը նշված միջազգային ռիսկերը կարող են տարիներով կանգնեցնել իրագործումը կամ անգամ լրիվ կասեցնել պայմանագրերի իրագործումը:

Ադրբեջանական կողմը դիտարկում է նաև որոշ ոչ ավանդական, արտաքին ռիսկեր՝ Հայկական սփյուռքը համարելով կարգավորման պոտենցիալ խոչընդոտ:

Առաջարկություններ

1.Քաղաքական հարթություն

Թե՛ Երևանը և թե՛ Բաքուն դիմակայունություն են ցուցաբերել որոշ արտաքին ճնշումների հանդեպ, բայց ներկայիս պայթունավտանգ միջազգային միջավայրը ավելի սերտ տարածաշրջանային համակարգում է պահանջում, գոնե՝ Հարավային Կովկասում, կատարելապես՝ Կենտրոնական Ասիան Միջին Արևելքին կապող ձևաչափերի ներքո: Նման ինտեգրումը կարող էր մեղմել Ադրբեջանի հետ ուժերի անհավասարակշռության վերաբերյալ Հայաստանի մտահոգությունները և կանխել վերջինիս մեկուսացումը, որը կարող է ծայրահեղական ու դժգոհություններից սնվող գաղափարաբանություն բորբոքել:

Երեք երկրները կարող են սկսել ոչ պաշտոնական աշխատանքային խմբերից՝ կազմակերպությունների ներսում, որոնց անդամակցում են (Ճանհայի համագործակցության կազմակերպություն, Եվրոպայի խորհուրդ): 2025 թվականի ՝ փոխարտգործնախարարների մակարդակով անցկացված հանդիպումը Թբիլիսիում կարող է ծառայել իբրև մշտական ձևաչափերի մոդել: Միջազգային հարթակներում փոխադարձ աջակցությունը կարող է ընդլայնվել, օրինակ՝ Բաքվի դերը Հայաստան-Պակիստան հարաբերությունների հաստատման գործում, Երևանի դերը՝ ֆրանս-ադրբեջանական մերձեցման գործընթացում:

Միջգերատեսչական հաղորդակցական ուղիղ կապերը, այդ թվում՝ պաշտպանության նախարարությունների միջև, կօգնեն թափանցիկությանն ու վստահության ձևավորմանը:

Հանրաքվեի հետ կապված ռիսկերը կրճատելու համար կարելի է՝

ա) Համաձայնագիրը ստորագրել նախքան հանրաքվեն՝ իբրև հանձնառության նշան

բ) համաձայնագրի ստորագրումից հետո առավելագույնի հասցնել դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համատեղ ջանքերը

գ) նախապես մշակել անհրաժեշտ քայլեր՝ քվեարկության ձախողման դեպքում խաղաղության գործընթացի վրա հնարավոր բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար

դ) իրագործման հստակ շրջանակ մշակել Համատեղ հռչակագրի համար՝ իրավական անորոշություններից ու վեճերից խուսափելու համար:

Համաձայնագրի VII-րդ հոդվածը հասցեագրում է ԵՄ դիտորդական առաքելության ներկայության հարցը: Առաքելության դերը պետք է վերանայվի Հայաստանի և ԵՄ-ի միջև:

Երկրների միջև ճամփորդելու հնարավորության բացակայությունը մուտքի արտոնագրերի հետ կապված հարցերը անկարևոր է դարձրել, բայց եթե սահմանը հատող այցերը վերականգնվեն, ներկայիս անվտանգային կարգավորումներն այլևս չեն աշխատի: Առաջիկա տարիներին ավելի պրակտիկ սահմանային հսկողության մեխանիզմ է պահանջվելու:

2 Հաղորդակցությունը

Քանի որ Թրամփի ուղու իրագործումը ժամանակատար է, երկու կողմն էլ կարող է բացել գոյություն ունեցող կոմունիկացիաները՝ տարածաշրջանային և միջտարածաշրջանային հաղորդակցությունը խթանելու համար:

3. Խաղաղասիրական կրթություն և մշակութային փոխանակում

Տասնամյակներ շարունակ կրթությունը արմատավորել է թշնամական նարատիվներ: Դասագրքերը հակառակ կողմին ներկայացրել են որպես

թշնամի, և սերունդներ են մեծացել՝ առանց շփման: Խաղաղասիրական կրթությունից պիտի դուրս բերվի ատելությունը, տեսանկյունները պիտի ներկայացվեն հավասարակշռված, հավանաբար պետք կլինի պատմաբանների համատեղ հարթակ ձևավորել: Առցանց դասընթացների, փոխանակման ծրագրերի, ամառային ճամբարների, քույր դպրոցների ստեղծումը կարող է ամրապնդել փոխադարձ ըմբռնումը: Համաձայնագրի նախնական տեքստի 10-րդ հոդվածը անթաքույց քաջալերում է մշակութային և մարդասիրական համագործակցությունը՝ նման նախաձեռնությունների համար հիմք առաջարկելով:

4. Վստահության ամրապնդում՝ համայնքային մակարդակում

Երբ սահմանը բացվի և հարաբերությունները կարգավորվեն, ուղիղ շփումները հասարակությունների միջև կարևոր կդառնան. արվեստագետների փոխանակման ծրագրեր, սպորտային միջոցառումներ, քաղաքների միջև համագործակցություններ, միջսահմանային բիզնեսներ և միմյանց մշակութային ժառանգության պահպանում: Խորհրդանշական ժեստերը՝ փոխադարձ այցելություններ նախնիների գերեզմանին կամ պատմական վայրեր, կօգնի մարդկայնացնել հակառակ կողմին: Համատեղ նախագծերը, օրինակ՝ շուկաները սահմանին կամ բնապահպանական գործակցությունը, կարող է խաղաղությունը դարձնել փոխշահավետ:

5. Լրատվամիջոցների փոխակերպումը

Լրատվամիջոցները հաճախ բազմապատկել են ազգայնական նարատիվները: Պատասխանատու լրագրությունը պիտի սատարի հաշտեցումը փաստահեն լրատվությամբ, մարդկային պատմություններով, ատելության խոսքը մերժելով: Հյուսիսային Իռլանդիայի ու Կոլումբիայի փորձառությունը ցույց է տալիս, թե ինչպես է համայնքային լրատվամիջոցը վճռորոշ դեր խաղում հետկոնֆլիկտային փոխակերպման մեջ:

Լինքս Եվրոպա հիմնադրամը հիմնվել է 2019 թվականի փետրվարին՝ նպաստելու և ամրապնդելու եվրոպական հիմք՝ մի շարք նախաձեռնությունների և նախագծերի համար, որոնք վերաբերում են եվրոպական խաղաղությանը և անվտանգությանը, ինչպես նաև Եվրամիության հարաբերություններին հարևան շրջաններում՝ Արևելքում և Հարավում, որոնցից մի քանիսը հանդիսացել են Լինքս ցանցի գործունեության գլխավոր ուղղությունները Լոնդոնում հիմնադրման պահից՝ 1997 թվականից:

Հաագայում՝ խաղաղության և արդարության քաղաքում, Լինքս Եվրոպան կիրառում է տարբեր գործիքներ իր նպատակներին հասնելու համար՝ ավանդական երկխոսության մեթոդաբանություններ, նորարարական վստահության հաստատման միջոցներ, ինչպես նաև վերջին տեխնոլոգիաները հետազոտությունների, վերլուծության, հասարակայնացման և հաղորդակցության ոլորտներում:

Մենք շարունակաբար զարգացնում ենք մեր մտածելակերպը վստահության հաստատման միջոցների վերաբերյալ՝ որպես կարևոր գործիք տարբեր համատեքստերում խաղաղություն հաստատելու, զարգացնելու և պահպանելու համար: Մենք աշխատում ենք բարձրացնել միջազգային հարաբերությունների ընթացիկ հարցերի վերաբերյալ իրազեկությունը: Լավ տեղեկացված քաղաքացիները ավելի քիչ են ենթարկվում ապատեղեկատվության կամ պոպուլիզմի ազդեցությանը: Եվ եթե անհրաժեշտ է, նաև փորձում ենք ապահովել անվտանգ միջավայր, որտեղ կարող են արտահայտվել և քննարկվել տարբեր կարծիքներ:

Հայ–ադրբեջանական նոր երկխոսության թեմատիկ խմբեր

Տարածաշրջանային կոմունիկացիաների թեմատիկ խմբի զեկույց

Նարեկ Մինասյան (նախագահող, Հայաստան)

Նիգար Գուրբանլի (փոխնախագահող, Ադրբեջան)

This is an informal translation of the report. The authoritative text is the English version agreed by the Armenian and Azerbaijani members of the thematic group, as published on commonspace.eu.

Սա զեկույցի ոչ պաշտոնական թարգմանությունն է: Պաշտոնական տեքստը անգլերեն տարբերակն է, որը համաձայնեցվել է թեմատիկ խմբի հայ և ադրբեջանցի անդամների կողմից և հրապարակվել commonspace.eu կայքում:

Նոյեմբեր, 2025 թ.

Նախաձեռնող՝ Լինքս Եվրոպա (ԵՄ-ն հանուն խաղաղության 3 ծրագրի շրջանակում)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ

Ամսաթիվ՝ Նոյեմբեր, 2025 թ.

Նախաձեռնող՝ Լինքս Եվրոպա (ԵՄ-ն հանուն խաղաղության 3 ծրագրի շրջանակում)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ

Տարածաշրջանային հաղորդուղիների թեմատիկ խումբ

Հեղինակներ Հայաստանից

Նարեկ Մինասյան (նախագահող)

Սամվել Մելիքսեթյան

Ռոբերտ Ղևոնդյան

Դիանա Գասպարյան

Սուրեն Թադևոսյան

Վահրամ Հովհաննիսյան

Հայրիկ Սուքիասյան

Հեղինակներ Ադրբեջանից

Նիգար Գուրբանլի (փոխնախագահ)

Էլմիր Աբասով

Էմիլ Ալիև

Սաբինա Տագիևա

Տարածաշրջանային կապակցվածություն

Ամփոփ տեսլական տարածաշրջանի համար՝ մինչև 2040 թվականը

Հարավային Կովկասում տարածաշրջանային կապակցվածությունը զգալի հեռանկարներ է բացում երկարաժամկետ կայունության, տնտեսական աճի և ավելի լայն եվրասիական ցանցերին ինտեգրվելու համար: Գտնվելով կարևոր աշխարհաքաղաքական խաչմերուկում՝ Հայաստանը և Ադրբեջանը կարող են վերածվել կենսական նշանակության տարանցիկ ուղիների, որոնք կապում են Եվրոպան և Ասիան: Սակայն տասնամյակների հակամարտությունն ու սահմանափակ համագործակցությունը խոչընդոտել են այս ներուժի իրացմանը՝ թողնելով ենթակառուցվածքները մասնատված, իսկ տարածաշրջանային առևտուրը՝ թերզարգացած:

2025 թվականի օգոստոսի 8-ի հռչակագիրը և խաղաղության համաձայնագրի նախաստորագրումը նշանակալի քայլ են հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Այս զարգացումները հիմք են ստեղծում հաղորդուղիների վերաբացման, ենթակառուցվածքների բարելավման և միջազգային ներդրումների ներգրավման համար: Տրանսպորտային, էներգետիկ և թվային ցանցերի միջոցով ընդլայնված կապակցվածությունը կարող է բարձրացնել տարածաշրջանի մրցունակությունը, դիվերսիֆիկացնել առևտրային հոսքերը և ապահովել ներառական տնտեսական օգուտներ սահմանամերձ համայնքների համար:

SWOT վերլուծությունը մատնանշում է ինչպես մարտահրավերները, այնպես էլ հնարավորությունները. դանդաղ իրագործման գործընթացները և արտաքին քաղաքական ճնշումները շարունակում են սահմանափակող գործոններ մնալ, սակայն տարածաշրջանի ռազմավարական դիրքը, զարգացող ենթակառուցվածքային ծրագրերը և արտաքին գործընկերների աճող հետաքրքրությունը առաջընթացի համար ամուր հիմք են ստեղծում:

Մշակված երեք սցենարները՝ Լավատեսական, Սահմանափակ և Հոռետեսական, որոնք պատկերում են կապակցվածության հնարավոր արդյունքները՝ կախված քաղաքական համագործակցության խորությունից և աշխարհաքաղաքական դերակատարների ազդեցությունից:

«Տեսլական 2040» շրջանակը ընդգծում է կապակցվածությունը որպես համատեղ բարեկեցության շարժիչ ուժ՝ որի նպատակը արդիականացված երթուղիները, կարգավորումների ներդաշնակեցումը և մարդկանց միջև

շփումների ընդլայնումն է: Փուլային ճանապարհային քարտեզը (2025–2040 թթ.) նախանշում է քայլեր՝ վստահության ամրապնդումից և համատեղ ենթակառուցվածքային նախագծերից մինչև տարածաշրջանային ինստիտուցիոնալ համակարգման խորացում:

Հարավային Կովկասում կապակցվածության ամրապնդումը կարող է վերափոխել տարածաշրջանը՝ դարձնելով այն առավել կայուն, տնտեսապես դիմակայուն և համագործակցային տարածք՝ օգուտ բերելով ինչպես տեղական բնակչությանը, այնպես էլ ավելի լայն տարածաշրջանային ցանցերին:

Ներկայիս իրավիճակի գնահատում

Հարավային Կովկասի տարածաշրջանային կապակցվածությունն ապահովելու համար առկա են ինչպես հնարավորություններ, այնպես էլ սահմանափակումներ: Հայաստանը և Ադրբեջանը գտնվում են Եվրոպան և Ասիան միացնող ռազմավարական խաչմերուկում, սակայն տարիների պատերազմը և փոխադարձ անվստահության վրա հիմնված քաղաքականությունը հանգեցրել են նրան, որ հիմնական տրանսպորտային և առևտրային կապերը մնացել են թերզարգացած կամ ընդհատվել են: Ենթակառուցվածքային բացերը, կառավարման համակարգերի խզվածությունը և սահմանային հնացած ընթացակարգերը շարունակում են սահմանափակել տարածաշրջանի ինտեգրումը համաշխարհային շուկաներին:

Վերջին դիվանագիտական առաջընթացը, ներառյալ 2025 թվականի օգոստոսի 8-ի հռչակագիրը և խաղաղության համաձայնագրի նախաստորագրումը, հնարավորություն է ստեղծել կապակցվածության վերաբերյալ գործնական երկխոսության համար: Այս զարգացումները հակամարտությունից ի վեր հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ամենանշանակալի առաջընթացն են, ընդ որում երկու կողմերն էլ ցուցաբերում են պատրաստակամություն՝ ներգրավվելու հաղորդակցության ուղիների բացման հետ կապված հարցերում: Եթե կարգավորման գործընթացը լինի շարունակական և վերածվի իրագործման կոնկրետ միջոցառումների, ապա դա կնվազեցնի տրանսպորտի և առևտրի շարժի խոչընդոտները և կներգրավի օտարերկրյա ներդրումներ տրանսպորտային, էներգետիկ և թվային ենթակառուցվածքներում:

Եվրոպական միությունը, Համաշխարհային բանկը, Ասիական զարգացման բանկը և տարածաշրջանային տնտեսական կազմակերպությունները պատրաստակամություն են հայտնել՝ աջակցելու կապակցվածության այն նախագծերին, որոնք կձևավորվեն կայուն խաղաղության համաձայնագրի հիման վրա:

Ներկայումս Հայաստանը մեծապես ապավինում է Հյուսիս–Հարավ կապակցվածությանը՝ Վրաստանի և Իրանի միջոցով, իսկ Ադրբեջանը ընդլայնել է իր մասնակցությունը Անդրկասպյան «Միջին միջանցք» նախաձեռնությանը: Թվային կապերը և էներգետիկ համագործակցությունը դեռևս զարգացման փուլում են, սակայն երկրներն ավելի ու ավելի են գիտակցում նախաձեռնողական քաղաքականության արժեքը, որը կարող է բարձրացնել մրցունակությունն ու խթանել տարածաշրջանային ինտեգրումը: Այս պայմաններում կապակցվածության խորացումը պահանջում է զգուշավոր վստահության ամրապնդում, փոխադարձ երաշխիքներ և շարունակական միջազգային ներգրավվածություն, որպեսզի ակնկալվող օգուտները լինեն կայուն և ներառական:

SWOT վերլուծություն

Հայաստանի՝ տարածաշրջանային կապակցվածության համատեքստում իրատեսական և առաջանցիկ տեսլականի համար կարևոր է գնահատել Հայաստանի և Ադրբեջանի ներկայիս դիրքերը՝ ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները

SWOT վերլուծություն Հայաստանի համար՝ տարածաշրջանային կապակցվածության համատեքստում

Ուժեղ կողմեր

- Ռազմավարական աշխարհագրական դիրք՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի խաչմերուկում:

- Բարձր որակավորում ունեցող մարդկային կապիտալ, մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և ճարտարագիտության ոլորտներում, որը կարող է աջակցել թվային կապակցվածությանը:
- Սփյուռքի համաշխարհային ցանցեր՝ ապահովող հասանելիություն շուկաների և ներդրումների:
- Ժողովրդավարական կառավարման համակարգը խթանում է բաց շուկաները և մրցակցային բիզնես կարգավորումները՝ ստեղծելով լիբերալ հնարավորություններ նոր կապերի ձևավորման համար, հատկապես տարածաշրջանային ինտեգրման:
- Ակտիվ ներգրավվածություն ԵՄ-ի, ԵԱՏՄ-ի և այլ տարածաշրջանային ձևաչափերում, ինչը հնարավորություն է տալիս բազմավեկտոր համագործակցության:

Թույլ կողմեր

- Շրջափակում և դեպի ծով ելքի բացակայություն:
- Սահմանափակ տարանցիկ ուղիներից (Վրաստանի և Իրանի միջոցով) մեծ կախվածություն, ինչը տնտեսությունը դարձնում է խոցելի:
- Թերզարգացած տրանսպորտային ենթակառուցվածքներ, մասնավորապես՝ երկաթուղային համակարգը և լոգիստիկ հանգույցները:
- Քաղաքական և անվտանգության խոցելիություն, որը կարող է խաթարել կապակցվածության նախագծերը:
- Բյուրոկրատական գործընթացներ և սահմանափակ կազմակերպչական կարողություններ, որոնք ազդում են ծրագրերի իրագործման վրա:
- Էներգետիկ մեծ կախվածություն մեկ հիմնական մատակարարից, ինչը սահմանափակում է դիվերսիֆիկացումը և բարձրացնում արտաքին ճնշումների նկատմամբ խոցելիությունը:

Հնարավորություններ

- **Օգոստոսի 8-ի հռչակագիրը և** Ադրբեջանի հետ ընթացող խաղաղության գործընթացը կարող են բացել տրանսպորտային ցանցերը:

- **«Միջազգային խաղաղության և բարօրության Թրամփի ուղին» (TRIPP)** կարող է ներգրավել օտարերկրյա ներդրումներ և մեծացնել Հայաստանի դերը տարածաշրջանային առևտրում:
- **ԵՄ Համաշխարհային դարպասը (Global Gateway)** և միջազգային այլ նախաձեռնություններ կարող են տրամադրել ֆինանսական և տեխնիկական աջակցություն:
- Հարավային Կովկասը համաշխարհային ցանցերին միացնող **թվային հանգույց** դառնալու պոտենցիալ ունի:
- **Կանաչ և վերականգնվող էներգետիկայի** նախագծերը կարող են ամրապնդել տարածաշրջանային էներգետիկ փոխկապակցվածությունը:

Սպառնալիքներ

- Ադրբեջանի հետ փխրուն կարգավորումը կարող է կանգ առնել կամ հետընթաց ապրել, եթե լարվածությունը վերսկսվի:
- Տարածաշրջանային մրցակցությունները (Ռուսաստան–Արևմուտք, Թուրքիա–Իրան) կարող են սահմանափակել Հայաստանի մանևրելու հնարավորությունները:
- Տնտեսական չափազանց մեծ կախվածությունը արտաքին դերակատարներից կարող է նվազեցնել ռազմավարական ինքնավարությունը:
- Ներքաղաքական բևեռացումը կարող է խոչընդոտել երկարաժամկետ քաղաքականության շարունակականությանը:
- Հիբրիդային գործիքները, որոնք հնարավորություն են տալիս Ռուսաստանին ազդել Հայաստանի քաղաքական և տնտեսական ոլորտների վրա՝ առաջացնելով խաթարումներ:

Ադրբեջանի SWOT վերլուծությունը տարածաշրջանային փոխկապակցվածության համատեքստում

Ուժեղ կողմեր

- Աշխարհաքաղաքական դիրքը՝ որպես էներգետիկ և տրանսպորտային առանցքային միջանցք, որը կապում է Կասպից տարածաշրջանը Եվրոպայի և Ասիայի հետ:
- Հարուստ էներգետիկ պաշարները, հատկապես նավթը և բնական գազը, որոնք ապահովում են տնտեսական լծակներ և ենթակառուցվածքների ֆինանսավորման պոտենցիալ:
- Հզոր տրանսպորտային ենթակառուցվածքները՝ ներառյալ ժամանակակից նավահանգիստները, մայրուղիները և երկաթուղային ցանցերը, որոնք հեշտացնում են տարածաշրջանային առևտուրը:
- Ուժեղ ազգային վճռականությունը տարածաշրջանային փոխկապակցվածության նախագծերի մշակման հարցում՝ սատարված պետական նախաձեռնությունների և ներդրումների կողմից:
- Ռազմավարական գործընկերությունները տարածաշրջանային և գլոբալ դերակատարների հետ, ներառյալ Չինաստանը, Թուրքիան և ԵՄ-ն, որոնք աջակցում են ենթակառուցվածքների զարգացմանը:
- Ակտիվ ներգրավվածությունը տարածաշրջանային համագործակցության շրջանակներում, ինչպիսիք են Անդրանատոլիական գազամուղը և TRACECA միջանցքը:

Թույլ կողմեր

- Տնտեսական կախվածությունը էներգակիրների արտահանումից, ինչը տնտեսությունը խոցելի է դարձնում հումքի համաշխարհային գների տատանումների նկատմամբ:
- Ենթակառուցվածքային բացերը գյուղական և սահմանամերձ շրջաններում կարող են խոչընդոտել ավելի լայն տարածաշրջանային փոխկապակցվածությանը:

Հնարավորություններ

- Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը խաղաղության համաձայնագրերի միջոցով կարող է բացել նոր տրանսպորտային և առևտրային երթուղիները:
- Ենթակառուցվածքային նախագծերը Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության (BRI) և տարածաշրջանային տարանցիկ ծրագրերի շրջանակներում կարող են ուժեղացնել կապը:
- Նոր էներգետիկ խողովակաշարերի և միկացիչների զարգացումը կարող է դիվերսիֆիկացնել արտահանման ուղիները և ամրապնդել տարածաշրջանային էներգետիկ անվտանգությունը:
- Տարածաշրջանային լոգիստիկ հանգույց դառնալու պոտենցիալը՝ օգտագործելով կասպյան, մերձավորարևելյան և եվրոպական շուկաների մոտ լինելը:
- Տարածաշրջանային համագործակցության աճը կարող է ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ և խթանել տնտեսական դիվերսիֆիկացումը:

Սպառնալիքներ

- Համաշխարհային էներգետիկ շուկաների տատանումները կարող են ազդեցություն ունենալ տնտեսական կայունության և ենթակառուցվածքային նախագծերում ներդրումների վրա:
- Դիվանագիտական մարտահրավերները հարևան երկրների կամ գերտերությունների հետ կարող են խոչընդոտել տարածաշրջանային համագործակցությանը:

Սցենարներ

Հարավային Կովկասում տարածաշրջանային կապակցվածության ապագան սերտորեն կապված է Հայաստանի և Ադրբեջանի միջև քաղաքական, տնտեսական և սոցիալական դինամիկայի, ինչպես նաև ավելի լայն տարածաշրջանային զարգացումների հետ: Ռազմավարական պլանավորմանը ուղղորդելու նպատակով առանձնացվել են երեք հավանական սցենարներ՝ Լավատեսական, Չափավոր և Հոռետեսական: Այս

սցենարները կանխատեսումներ չեն, այլ գործիք, որը հնարավորություն է տալիս քաղաքական որոշում կայացնողներին, փորձագետներին և շահագրգիռ կողմերին նախապես գնահատել մարտահրավերներն ու հնարավորությունները և մշակել հարմարվող ռազմավարություններ՝ «Տեսլական 2040»-ի նպատակներին հասնելու համար:

1. Լավատեսական սցենար՝ խորը ինտեգրում

Այս սցենարի համաձայն՝ 2025 թվականի օգոստոսի 8-ի հռչակագրից և խաղաղության համաձայնագրի նախաստորագրումից հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև լիարժեք կարգավորում է տեղի ունենում: Քաղաքական վստահությունն ամրապնդվում է՝ հնարավորություն տալով արագ իրականացնել անդրսահմանային ենթակառուցվածքային նախագծեր, այդ թվում՝ ճանապարհային, երկաթուղային, էներգետիկ և թվային բնույթի: Առևտրի դյուրացումը և մաքսային ընթացակարգերի պարզեցումը մեծացնում են ապրանքների և ծառայությունների հոսքերը, իսկ նոր ներդրումային նախագծերը ներգրավում են թե՛ տարածաշրջանային, թե՛ միջազգային ֆինանսավորում:

Մարդկանց միջև շփումները, ներառյալ ակադեմիական, մշակութային և մասնագիտական շարժունության ծրագրերը, ընդլայնվում են՝ ամրապնդելով սոցիալական համախմբվածությունն ու փոխադարձ ըմբռնումը: Հայաստանը և Ադրբեջանը ձևավորվում են որպես ավելի լայն եվրասիական ցանցի կենտրոնական հանգույցներ՝ Եվրոպան և Ասիան կապող բազմակի երթուղիներով:

Այս սցենարում Հարավային Կովկասը հասնում է տնտեսական ինտեգրման բարձր մակարդակի, տարանցիկ երթուղիների դիվերսիֆիկացման և կայուն զարգացման՝ միաժամանակ ամրապնդելով տարածաշրջանային կայունությունն ու համագործակցությունը:

2. Չափավոր ցենար – Մասնակի առաջընթաց

Այս սցենարում կարգավորման գործընթացը զարգանում է զգուշավոր տեմպով: Որոշ ենթակառուցվածքային և կապակցվածության նախագծեր առաջ են շարժվում, մինչդեռ մյուսները հետաձգվում են՝ ներքին քաղաքական զգայունությունների, կարգավորումների հետ կապված խնդիրների կամ

իրականացման ոչ բավարար կարողությունների պատճառով: Տրանսպորտային ցանցերում, էներգետիկ փոխանակման և թվային ենթակառուցվածքների ոլորտում արձանագրվում են սահմանափակ, բայց նշանակալի բարելավումներ՝ հիմնականում ցածր ռիսկային նախաձեռնությունների միջոցով, որոնք չեն մարտահրավեր չեն նետում ինքնիշխանությանը և չեն առաջացնում հանրային հակասություններ: Առևտուրն ու ներդրումները չափավոր աճում են, սակայն անդրսահմանային համագործակցությունը կրում է ընտրողական բնույթ: Վստահության ամրապնդման միջոցառումները շարունակվում են, և բազմակողմ աջակցությունը կարևոր դեր է խաղում փուլային առաջընթացի ապահովման գործում:

Այս սցենարում կապակցվածությունը բարելավվում է փուլ առ փուլ՝ ստեղծելով տնտեսական օգուտներ, սակայն ամբողջությամբ չի իրացվում տարածաշրջանի ինտեգրման ներուժը: Մասնակի առաջընթացը պահանջում է ճկուն պլանավորում և շարունակական երկխոսություն՝ ապահովելու համար, որ նախագծերը կենսունակ մնան նույնիսկ անորոշության պայմաններում:

3. **Հոռետեսական սցենար – Կանգ կամ հետընթաց**

Այս սցենարում լարվածության վերաճը կամ համաձայնագրերի վավերացման ձգձգումները զգալի դանդաղեցնում կամ նույնիսկ հետ են շրջում առաջընթացը: Քաղաքական տարաձայնությունները, ներքին ընդդիմությունը կամ արտաքին ճնշումները խոչընդոտում են առանցքային նախագծերի մեկնարկին կամ ավարտին: Նախատեսված տրանսպորտային, էներգետիկ և թվային ենթակառուցվածքային նախագծերը հետաձգվում են, կրճատվում կամ չեղարկվում՝ սահմանափակելով տնտեսական աճն ու տարածաշրջանային ինտեգրումը: Մարդկանց միջև շփումների նարավորությունները նվազագույն են, իսկ անվստահությունը շարունակում է սահմանափակել համագործակցությունը: Այս սցենարում կապակցվածությունը մնում է մասնատված, և Հարավային Կովկասի՝ որպես տարածաշրջանային հանգույց գործելու ներուժը չի իրացվում՝ ընդգծելով

անկայունության ռիսկերը և վստահության ամրապնդման շարունակական ջանքերի կարևորությունը:

Աշխարհաքաղաքական ազդեցություններ

Յուրաքանչյուր սցենարի իրականացումը զգալի կախված կլինի արտաքին դերակատարների, մասնավորապես՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Միացյալ Նահանգների, Չինաստանի և Եվրոպական միության գործողություններից: Լավատեսական սցենարում այս դերակատարների կողմից նախաձեռնողական ներգրավվածությունն ու աջակցությունը վճռորոշ կլինեն վստահության ձևավորման և համագործակցության խթանման գործում: Իսկ ընդհակառակը, չափավոր սցենարում արտաքին դերակատարների տարբերվող շահերը կամ սահմանափակ ներգրավվածությունը կարող են խոչընդոտել առաջընթացին: Հոռետեսական սցենարը կարող է սրվել այն արտաքին տերությունների ակտիվ միջամտության կամ ապակայունացնող գործողությունների հետևանքով, որոնք ձգտում են խաթարել տարածաշրջանային կայունությունը կամ առաջ մղել սեփական օրակարգերը: Այս աշխարհաքաղաքական ազդեցությունների ըմբռնումն ու կանխատեսումը հույժ կարևոր են արդյունավետ քաղաքականության մշակման համար:

Առաջընթացի մոնիտորինգի հիմնական ցուցանիշները

Առաջընթացին արդյունավետ հետևելու և ռազմավարությունները հարմարեցնելու համար կարևոր է մոնիտորինգի ենթարկել տարբեր ոլորտների մի շարք հիմնական ցուցիչներ: Դրանք են՝

- Քաղաքականը՝ բարձր մակարդակի երկխոսության հաճախականություն, համաձայնագրերի վավերացում, առաջընթաց սահմանազատման (դեմարկացիա) և սահմանազծման (դելիմիտացիա) գործընթացներում, քաղաքական հռետորաբանության փոփոխություն:
- Տնտեսական ցուցիչներ՝ առևտրի ծավալ, արտասահմանյան ուղղակի ներդրումներ, ենթակառուցվածքային ծախսեր, ՀՆԱ-ի աճ:

- Սոցիալականը՝ անդրսահմանային փոխանակումների քանակը, հանրային վստահության մակարդակը, տարածաշրջանային հարաբերությունների լուսաբանումը զանգվածային լրատվամիջոցներով
- Ենթակառուցվածքային ցուցիչներ՝ հիմնական նախագծերի իրականացման ժամանակացույցեր, կապակցվածության ցուցանիշներ, էներգիայի փոխանցման հզորություն:

Այս ցուցիչների կանոնավոր մոնիտորինգն ու գնահատումը արժեքավոր պատկերացում կտա տարածաշրջանային փոխկապակցվածության զարգացող դինամիկայի վերաբերյալ և հիմք կհանդիսանա ռազմավարական ծրագրերում փոփոխություններ կատարելու համար:

Տեսական

Մինչև 2040 թվականը կանխատեսվում է, որ Հարավային Կովկասը կլինի ռազմավարական փոխկապակցվածությամբ, տնտեսական դիվերսիֆիկացմամբ և քաղաքական կայունությամբ բնորոշվող տարածաշրջան՝ պայմանավորված Հայաստանի և Ադրբեջանի միջև վերականգնված համագործակցությամբ: Այս վերափոխման հիմքում փոխադարձ վստահությունն է, որը խաղաղության և տարածաշրջանային ինտեգրման հիմնական խոչընդոտն էր:

2025 թվականի օգոստոսի 8-ի հռչակագիրը և համապարփակ խաղաղության համաձայնագրի նախաստորագրումը սկիզբ դրեց հակամարտությունից դեպի պրագմատիկ գործակցություն անցմանը: Երկու երկրներն էլ առաջնահերթություն տվեցին վստահության ամրապնդման միջոցառումներին և թափանցիկ երկխոսությանը՝ հնարավորություն ստեղծելով աստիճանաբար իրականացնել անդրսահմանային նախագծեր տրանսպորտի, էներգետիկայի և թվային ենթակառուցվածքների ոլորտներում:

Բարելավված փոխկապակցվածությունը դիրքավորում է Հայաստանն ու Ադրբեջանը որպես վճռորոշ հանգույցներ եվրասիական առևտրային և տարանցիկ կապերի շրջանակում՝ ներգրավելով տարածաշրջանային և միջազգային ներդրումներ: Ներդաշնակեցված մաքսային ընթացակարգերը և պարզեցված կանոնակարգերը կհեշտացնեն առևտուրը՝ օգուտ բերելով թե՛

խոշոր ձեռնարկություններին, թե՛ ՓՄՁ-ներին (փոքր և միջին ձեռնարկություններ) և նպաստելով ներառական տնտեսական աճին: Արդիականացված երկաթուղիները, մայրուղիները և երթուղային հարմարությունները նույնպես կարող են նպաստել ապրանքների, ծառայությունների և մարդկանց անխափան տեղափոխմանը: Բարելավված փոխկապակցվածության տեսլականի կենտրոնում տնտեսական օգուտների լայն բաշխումն է, որը ձեռնտու կլինի սահմանամերձ շրջաններում ապրող համայնքներին՝ աշխատատեղերի ստեղծման, տեղական ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու ու ներդրումներ ներգրավելու, ինչպես նաև փոխկապակցվածության նախագծերի պլանավորման, նախագծման և իրականացման փուլերում համայնքների ներգրավման միջոցով:

Ենթակառուցվածքներից զատ, մարդկային շփումների կայուն նախաձեռնությունները՝ ակադեմիական փոխանակումները, մշակութային ծրագրերը և մասնագիտական ցանցերը, կարևոր դեր են խաղում սոցիալական համախմբվածության վերականգնման և փոխըմբռնման խթանման գործում, ինչն անհրաժեշտ է երկարաժամկետ կայունության համար: Ավելին, այս կրթական, մշակութային և մասնագիտական փոխազդեցությունները կարող են դառնալ սովորական՝ ձևավորելով նոր սերունդներ, որոնք փոխկապակցվածությունը դիտարկում են որպես հնարավորություն, այլ ոչ թե սպառնալիք:

Նայելով առաջ՝ տարածաշրջանը որդեգրում է թվային նորարարությունը, վերականգնվող էներգետիկան և բնապահպանական դիմակայունությունը: Կանաչ ենթակառուցվածքներում և կլիմայի հարմարվողականությանն ուղղված ներդրումները նպատակ ունեն մեղմել այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են ջրի սակավությունը և էներգետիկ անվտանգության անապահովությունը ընդլայնված թվային կառավարումը և կիբեռանվտանգության ոլորտում համագործակցությունն էլ ավելի կխթանեն մրցունակությունը և թափանցիկությունը:

Թեև աշխարհաքաղաքական և ներքին մարտահրավերները պահպանվում են, այս «Տեսլական 2040»-ն ընդգծում է, որ տևական խաղաղությունը և տարածաշրջանային ինտեգրումը հիմնարար կերպով կախված են **կայուն փոխադարձ վստահությունից, ճկուն կառավարումից և բազմակողմ**

ներառականությունից: Այս հանձնառությունների միջոցով Հարավային Կովկասը պատմականորեն բաժանված տարածաշրջանից վերածվում է Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում գտնվող կապակցված, կայուն և բարգավաճ կենտրոնի:

Ճանապարհային քարտեզ Հարավային Կովկասում տարածաշրջանային փոխկապակցվածության համար (2025–2040)

Ճանապարհային քարտեզով նախատեսվում է Հայաստանի և Ադրբեջանի միջև հետկոնֆլիկտային իրականությունը դարձնել կայուն համագործակցություն՝ փուլային, ներառական և կայուն կապակցվածության նախաձեռնությունների միջոցով:

Հիմնվելով 2025 թվականի օգոստոսի 8-ի հռչակագրի և ակնկալվող խաղաղության համաձայնագրի վրա՝ գործընթացը քաղաքական կարգավորումը կապում է շոշափելի տնտեսական ու սոցիալական օգուտների հետ՝ խթանելով վստահությունը, կայունությունը և ներառական աճը:

Փուլ I. Վստահության ամրապնդում և հիմնարար նախաձեռնություններ (2025–2027)

Նպատակը. Քաղաքական հեղինակության հաստատում, հաղորդակցության ուղիների վերաբացում և համագործակցության համար նպաստավոր շրջանակների նախագծում:

Առաջնահերթություններ՝

- Ինստիտուցիոնալ երաշխիքներ
- Հետազոտություն
- Վերականգնում և փոխկապակցվածություն
- Համագործակցություն առևտրի և սահմանային ոլորտներում
- Մարդասիրական և «փափուկ» փոխկապակցվածություն

Հիմնական նվաճումները (մինչև 2027թ.). Խաղաղության համաձայնագիրը վավերացված է, մոնիտորինգի մարմինները գործում են, առնվազն մեկ անդրսահմանային ենթակառուցվածքային նախագիծ մեկնարկած է, իսկ մարդկային շփումները, փոխանակումներն ինստիտուցիոնալացված են:

Փուլ II. Ինտեգրման ընդլայնում և խորացում (2028–2033)

Նպատակ. Համակարգումից անցում ինտեգրման՝ ընդլայնելով ենթակառուցվածքային ցանցերը, դիվերսիֆիկացնելով առևտուրը և ներդրումներ կատարելով մասնավոր հատվածում:

Առաջնահերթություններ.

- Ենթակառուցվածքների ընդլայնում
- Էներգետիկ և թվային գործակցություն
- Կարգավորումներ և տնտեսական ինտեգրում
- ՓՄՁ (Փոքր և միջին ձեռնարկություններ) և կրթական կապեր

Հիմնական նվաճումները (մինչև 2033 թ.). Գործող երթուղիներ, փոխկապակցված էներգետիկ և ՏՀՏ ցանցեր, աճող մասնավոր ներդրումներ և տարածաշրջանային առևտրի ծավալների ավելացում:

Փուլ III. Համախմբում և տարածաշրջանային հանգույցի կարգավիճակ (2034–2040)

Նպատակ. Համագործակցության ինստիտուցիոնալացում գործակցությունը և Հարավային Կովկասի դիրքավորում՝ որպես վստահելի եվրասիական տարանցիկ և նորարարական կենտրոն:

Առաջնահերթություններ.

- Տարածաշրջանային փոխկապակցված համայնք
- Կանաչ և թվային տրանսֆորմացիա
- Ինստիտուցիոնալ կայունություն
- Աշխարհաքաղաքական դիմակայունություն

Հիմնական նվաճումները. (մինչև 2040 թ.). Լիովին ինտեգրված կապակցվածություն Հարավային Կովկասում, որտեղ առկա է վստահություն, տնտեսական դիմադրողականություն և խաղաղություն, որտեղ ընդհանուր բարօրությունը դառնում է կայունության ամենահուսալի երաշխիքը:

Առաջարկներ

Փուլ I. Վստահության ձևավորման և հիմնարար նախաձեռնություններ (2025–2027)

- Խաղաղության համաձայնագրի ստորագրում և վավերացում:
- Հայաստան–Ադրբեջան համատեղ տեխնիկական մարմինների ձևավորում՝ ենթակառուցվածքների, առևտրի և մաքսային գործընթացների վերահսկման նպատակով:
- Ճանապարհային, երկաթուղային և օպտիկամանրաթելային կապերի իրագործելիության համատեղ ուսումնասիրությունների անցկացում՝ միջազգային գործընկերների աջակցությամբ:
- Երկու երկրների միջև ժամանակավոր երթուղիների վերաբացում և արդիականացում՝ օգտագործելով առկա ենթակառուցվածքները նախնական կապակցվածության ապահովման համար (օրինակ՝ Մարգարա–Երասխ–Նախիջևան–Բիչենեկ–Անգեղակոթ–Գորիս–Լաչին ավտոճանապարհ, Ղազախ–Իջևան–Վանաձոր–Գյումրի–Կարս երթուղի, ինչպես նաև երկաթուղային հաղորդակցության բացում՝ Աղստաֆա–Թբիլիսի–Ալավերդի–Գյումրի–Երասխ–Նախիջևան ուղղությամբ):
- Մարդկանց միջև շփումների կարգավորում՝ խթանելով մեդիա փոխանակումները և փորձագիտական երկխոսությունները տարածաշրջանային ենթակառուցվածքային օրակարգի շուրջ:
- Վստահության ձևավորման միջոցառումների նախագծում և իրականացում:
- Մաքսային ընթացակարգերի ներդաշնակեցում, թվային «մեկ պատուհան» համակարգերի ներդրում և համատեղ սահմանային անցակետերի փորձարկում:
- Բեռնափոխադրումների իրական ժամանակի տվյալների փոխանակում փորձնական էլեկտրոնային հարթակի միջոցով՝ կանխատեսելիության և վստահության բարձրացման նպատակով:
- Համատեղ արտակարգ արձագանքման կանոնակարգերի մշակում և ընդունում:

- «Հարավային Կովկասի կապակցվածության ֆորումի» ինստիտուցիոնալացում՝ Երևան–Բաքու–Թբիլիսի ռոտացիոն սկզբունքով, ենթակառուցվածքային առաջնահերթությունների և դոնորաջակցության համակարգման նպատակով:

Փուլ II. Ինտեգրման ընդլայնում և խորացում (2028–2033)

- Ենթակառուցվածքային գործընկերությունների զարգացում՝ երկաթուղիների, ավտոճանապարհների և մաքսային տերմինալների արդիականացման նպատակով:
- Տեխնիկական նորմերի ստանդարտացում (երկաթուղային ենթակառուցվածքներ, մաքսային կոդեր, էներգետիկ անվտանգության չափանիշներ և այլն):
- Մաքսային գործընթացների թվայնացում, տեխնիկական ստանդարտների համադրում և ինքնիշխանության ու չմիջամտության իրավական երաշխիքների ստեղծում:
- Սահմանամերձ նախաձեռնությունների նախագծում և իրականացում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ջրային ռեսուրսների կառավարումը և շրջակա միջավայրի պաշտպանությունը:
- Հայաստան–Ադրբեջան–Վրաստան սահմանային հատվածում սահմանային տոնավաճառի (border bazaar) ստեղծում՝ տեղական բնակչության միջև շփումները խթանելու նպատակով:
- Երկու երկրների միջև գազամատակարարման, էլեկտրաէներգետիկ և օպտիկամանրաթելային ենթակառուցվածքների փոխկապակցում:
- ՏՀՏ և տվյալների կառավարման համատեղ հարթակի ստեղծում:
- Սահմանամերձ ՓՄՁ-ների գործընկերությունների, մասնագիտական կրթական ծրագրերի և տարածաշրջանային համալսարանական ցանցերի խրախուսում՝ տնտեսական փոխկախվածությունը խորացնելու նպատակով:
- Հռետորաբանության և ատելության խոսքի մոնիտորինգի համատեղ հանձնաժողովի ստեղծում՝ շահագրգիռ կողմերին առաջարկություններ և վերապատրաստումներ տրամադրելու համար:

Փուլ III. Համախմբում և տարածաշրջանային հանգույցի կարգավիճակ (2034–2040)

- Ենթակառուցվածքների, ներդրումների խթանման և վեճերի կարգավորման համար մշտական համակարգող մարմնի ստեղծում:
- Վերականգնվող էներգետիկայի, ցածր ածխածնային տրանսպորտի, արհեստական բանականության և կիբեռանվտանգության ոլորտներում համագործակցության առաջնահերթացում:
- Արտաքին հիբրիդային սպառնալիքների հակազդման համատեղ հանձնաժողովի ստեղծում:
- Արտադրական կլաստերների համատեղ զարգացում (օրինակ՝ թեթև և ծանր արդյունաբերություն, ագրովերամշակում)՝ նոր տրանսպորտային կապերը օգտագործելով զարգացող շուկաներ մուտք գործելու համար:
- Սահմանամերձ կառավարման կառուցակարգերի ինստիտուցիոնալացում, կանոնավոր գնահատումների իրականացում և քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում:
- Խոշոր գործընկերների հետ հավասարակշռված ներգրավվածության ապահովում (ԵՄ, ԱՄՆ, Իրան, Վրաստան, Թուրքիա, Կենտրոնական Ասիա, Չինաստան և այլն)՝ միաժամանակ պահպանելով տարածաշրջանային ինքնավարությունը:
- Համատեղ մշակութային փառատոնների և հաշտեցմանը միտված միջոցառումների կազմակերպում:

Հայ–ադրբեջանական նոր երկխոսության թեմատիկ խմբեր

Արդյունավետ կառավարման թեմատիկ խմբի զեկույց

Սարգիս Հարությունյան (նախագահող, Հայաստան)

Ռամազան Սամադով (փոխնախագահող, Ադրբեջան)

This is an informal translation of the report. The authoritative text is the English version agreed by the Armenian and Azerbaijani members of the thematic group, as published on commonspace.eu.

Սա զեկույցի ոչ պաշտոնական թարգմանությունն է: Պաշտոնական տեքստը անգլերեն տարբերակն է, որը համաձայնեցվել է թեմատիկ խմբի հայ և ադրբեջանցի անդամների կողմից և հրապարակվել commonspace.eu կայքում:

Նոյեմբեր, 2025 թ.

Նախաձեռնող՝ Լինքս Եվրոպա (ԵՄ-ն հանուն խաղաղության 3 ծրագրի շրջանակում)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ

Ամսաթիվ՝ Նոյեմբեր, 2025 թ.

Նախաձեռնող՝ Լինքս Եվրոպա (ԵՄ-ն հանուն խաղաղության 3 ծրագրի շրջանակում)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ

Արդյունավետ կառավարման թեմատիկ խումբ

Հեղինակներ Հայաստանից

Սարգիս Հարությունյան (նախագահող)

Նարե Արամյան

Էլեոնորա Սարգսյան

Հակոբ Կարապետյան

Ռոբերտ Ղևոնդյան

Հեղինակներ Ադրբեջանից

Ռամազան Սամադով (փոխնախագահող)

Լաման Նասիրլի

Յալչիմ Նամադով

Սաբինա Հուսեինովա

Բեյրեք Հաջիև

Անար Էյուբ

Արդյունավետ կառավարման թեմատիկ խմբի զեկույց

Ներածություն

Տասնամյակներ շարունակ պատերազմն ու հակամարտությունը գերիշխել են հայկական և ադրբեջանական հասարակություններում, և մսացածն երկրորդական է եղել: 2025 թվականին՝ խաղաղության գալստյամբ, արդյունավետ կառավարումն աստիճանաբար առաջնահերթ է դառնում երկու երկրների քաղաքացիների համար:

Ուրվագծելով մեր տեսլականը մինչև 2040 թվականը՝ պատկերացնում ենք Հարավային Կովկասը մի վայր, ուր թափանցիկությունը, տեղեկատվության հասանելիությունը, հաշվետվողականությունը, հավասար հասանելիությունը ծառայությունների, տվյալների պաշտպանությունը և քաղաքացիների կարիքներին արձագանքող ու նրանց զորացնող կառավարման համակարգը այլևս նորմա են:

Ավելին՝ նման համակարգերը, զարգանալով երկու երկրներում զուգահեռ, փոխադարձաբար կամրապնդեն միմյանց և կնպաստեն երկու կողմերի միջև վստահության ձևավորմանն ու խաղաղությունն անդառնալիությանը:

Գիտակցում ենք այս թեմայի շուրջ երկարատև ու ընդգրկուն քննարկումների անհրաժեշտությունը՝ Հայաստանում, Ադրբեջանում, նաև՝ հայերի ու ադրբեջանցիների միջև: Սույն զեկույցը հեռու է հանդես գալուց որպես ավարտուն խոսք այս հարցում: Ձեր առջև մուտքի խոսք է, որը, հուսով ենք, սկիզբ կդնի երկխոսությանը թե՛ տեղական, թե՛ տարածաշրջանային մակարդակներում:

Զեկույցը պատրաստելիս՝ բազմաթիվ հանդիպումներ ենք ունեցել Հայաստանում, Ադրբեջանում, երրորդ երկրներում և առցանց հարթակներում: Հարցազրույցներ ենք վարել բազմաթիվ փորձագետների հետ: Ուրախ ենք ներկայացնել մեր հավաքական տեսլականը:

Թափանցիկություն

Մեր կողմից հարցված փորձագետներից մեկը նշել է. «Բարեփոխումները մեզ ցույց տվեցին, որ թափանցիկությունը չի կարող մնալ թղթի վրա. այն պահանջում է հարթակներ և ինստիտուտներ, որոնք տվյալները հասկանալի կդարձնեն սովորական քաղաքացիների համար: Այս դասը արդիական է ամբողջ տարածաշրջանի համար»:

Երկու երկրներն էլ քայլեր են ձեռնարկել դեպի բաց կառավարում, սակայն առաջընթացը մնում է անհամաչափ: Հայաստանի անդամակցությունը **Բաց կառավարման գործընկերությանը** հանգեցրել է մի շարք բարեփոխումների, ներառյալ 2022–2024 թվականների Գործողությունների ծրագիրը՝ բաց տվյալների, հակակոռուպցիոն պայքարի և քաղաքացիների մասնակցության վերաբերյալ: Ադրբեջանի՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքը (2004 թ., փոփոխված 2025 թ.-ին) նոր պահանջներ է սահմանել պետական հաստատություններում կոռուպցիոն ռիսկերի կառավարման համար: «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքում 2025 թվականի փոփոխությունները ներդրեցին պետական գնումների և ակտիվների հայտարարագրման թվային հաշվետվողականության հարթակներ, որոնք ինտեգրված են Ադրբեջանի պետական աուդիտի գրասենյակի վերահսկողական մեխանիզմների հետ:

Անհրաժեշտություն կա ամրապնդել բաց կառավարումը՝ քաղաքականության ակտիվ հրապարակման, էթիկական թվային մոտեցման, քաղաքացիական վերահսկողության և կանխատեսելի կարգավորող պրակտիկայի միջոցով, ինչը կխթանի թե՛ քաղաքացիների, թե՛ ներդրողների վստահությունը:

Ներառականություն

Երկու հասարակություններն էլ դժվարանում են ապահովել կանանց և երիտասարդների իրական ներառական մասնակցությունը երկրի կառավարման գործին: Հայաստանի Ընտրական օրենսգիրքը (2016 թ.) բարձրացրեց գենդերային քվոտաները, իսկ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը (2013 թ.) հիմքեր է ստեղծում հավասարության համար: Այդուհանդերձ, կանանց փաստացի ազդեցությունը մնում է սահմանափակ:

Ադրբեջանում երիտասարդների և կանանց ներգրավվածությունը հիմնականում կրում է խորհրդատվական բնույթ՝ արդյունքներ ձևավորելու սահմանափակ լիազորություններով:

Կանանց իրավունքների՝ Երևանում գործող պաշտպաններից մեկը նշել է. «Կուսակցական ցուցակներում կանանց ներկայությունը բավարար չէ, քաղաքական մշակույթը դեռևս սահմանափակում է նրանց ձայնը: Իրականում ներառել՝ նշանակում է տալ քաղաքականության վրա ազդելու հնարավորություն»:

Կարճաժամկետ հեռանկարում անհրաժեշտ են ավելի ուժեղ ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ինչպիսիք են երիտասարդների և կանանց խորհրդատվական խորհուրդները, իսկ միջնաժամկետ հեռանկարում՝ նաև օրենսդրական քվոտաներ՝ կայուն փոփոխություններ երաշխավորելու համար:

Կարևոր է նաև զորացնել երիտասարդներին, կանանց և մարգինալացված խմբերին՝ էլեկտրոնային կառավարման գործիքների, մասնակցային հարթակների և թվային նորարարական ծրագրերի հասանելիության միջոցով:

Ինստիտուցիոնալ կառավարում, թվային կառավարում և նորարարություն

Երկու երկրների քաղաքացիներն էլ պահանջում են ուժեղ ինստիտուցիոնալ կառավարում, այդ թվում՝ անկախ և թափանցիկ դատական համակարգ: Երկու երկրներն էլ պետք է դասեր քաղեն բարեկամ երկրների դրական փորձից և այն կառույցներից, որոնց անդամակցում են:

Պետք է շարունակել նորարարության և թվային կառավարման որդեգրումը: Այս առումով Ադրբեջանի թվային կառավարման և պետական ծառայությունների նորարարական շրջանակային համակարգը և Հայաստանի ՏՏ կառավարման էկոհամակարգը առանձնանում են որպես քաղաքացիակենտրոն օրինակներ, որոնք օգնում են ապահովել ծառայությունների հավասար հասանելիություն:

Վերջին տարիներին Ադրբեջանը զգալի քայլեր է ձեռնարկել արդյունավետ կառավարման և ինստիտուցիոնալ գործունեության մեջ ներառականության բարձրացման ուղղությամբ: Օրինակ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման մասին» 2023 թվականի օրենքը ազգային շրջանակները համապատասխանեցրեց ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային և ներդրեց պարտադիր թվային մատչելիության միջոցառումներ բոլոր պետական կայքերի և առցանց ծառայությունների համար: Նմանապես, 2024 թվականի՝ «Կրթության մասին» օրենքի բարեփոխումը ներառական կրթության չափանիշներ մտցրեց ամբողջ երկրում, որն ուղեկցվեց միջնակարգ դպրոցներում հարմար թվային գործիքների ներդրմամբ:

Այս բարեփոխումները արտացոլում են ավելի լայն անցումը դեպի քաղաքացիակենտրոն ծառայությունների մատուցում և թվային թափանցիկություն:

Երկու երկրները պետք է չվարանեն սովորել միմյանց լավագույն փորձից, և այս ոլորտում փոխանակման հատուկ ծրագիրը կլինի թե՛ ժամանակին, թե՛ օգտակար:

Տարածաշրջանային համագործակցություն

Թեև քաղաքական իրավիճակը դեռ բարդ է, տեխնիկական հարցերի շուրջ համագործակցությունը հնարավոր է և կարող է իրականացվել անմիջապես: Շրջակա միջավայրի մոնիտորինգը, աղետների կառավարումը և թվային կառավարումը կարող են լինել մեկնարկային կետեր:

Յուրաքանչյուր երկրում նման նախաձեռնությունները համակարգող Կապի միասնական կետի ստեղծումը կձևավորի ինստիտուցիոնալ կամուրջ՝ կառավարման ոլորտում տևական երկխոսության և վստահության ամրապնդման համար:

Գործողությունների ծրագիր - Քաղաքականության նախնական հանձնարարականներ

Կարճաժամկետ (0–5 տարի)

☑ Գործարկել բաց տվյալների հարթակներ Հայաստանում և Ադրբեջանում՝ բյուջեների, գնումների և քաղաքականությունների թափանցիկության համար,

☑ Ստեղծել կամ բարելավել երիտասարդների և կանանց խորհրդատվական խորհուրդներ՝ հստակ մանդատներով,

☑ Կազմակերպել համատեղ վերապատրաստման ծրագրեր տեղական ինքնակառավարման վերաբերյալ,

☑ Իրականացնել մասնակցային բյուջետավորման պիլոտային ծրագրեր համայնքային մակարդակում,

☑ Անցկացնել անդրսահմանային աշխատաժողովներ աղետների պատրաստվածության և շրջակա միջավայրի պահպանության թեմաներով,

☑ Մշակել Հայաստան–Ադրբեջան թվային կառավարման համատեղ ուսումնական հարթակ, որը կմիավորի Հայաստանի՝ նորարարության վրա հիմնված կառավարման էկոհամակարգը Ադրբեջանի թվային կառավարման և պետական ծառայությունների նորարարական շրջանակային համակարգի մոդելի հետ՝ նպաստելով փոխադարձ կարողությունների հզորացմանը, տեղեկատվության պրոակտիվ փոխանակմանը և քաղաքացիակենտրոն ծառայությունների մատուցմանը:

Միջնաժամկետ (5–15 տարի)

☑ Ստեղծել մեխանիզմներ թվային կառավարման գործիքների փոխադարձ ճանաչման համար (էլեկտրոնային ստորագրություն, ռեգիստր),

☑ Ընդլայնել ֆիսկալ ապակենտրոնացումը՝ հաշվետվողականության թափանցիկ մեխանիզմների կիրառմամբ,

☑ Հիմնադրել Հայաստան–Ադրբեջան կառավարման մշտական ֆորում՝ միջազգային կառույցների աջակցությամբ:

Եզրակացություն

Արդյունավետ կառավարումը շարունակում է մնալ Հարավային Կովկասի բոլոր քաղաքացիների ձգտումը: Կարևոր է հիմնվել Հայաստանի և Ադրբեջանի՝ վերջին տարիների ձեռքբերումների վրա, այդ թվում՝ թափանցիկության, կոռուպցիայի դեմ պայքարի և քաղաքացիներին արդարացի ծառայությունների մատուցման ոլորտներում: Այնտեղ, որտեղ առկա է լավագույն փորձը, կողմերը չպետք է վարանեն սովորել միմյանցից:

Այս զեկույցը նպատակ ունի խթանել բանավեճը, առաջին անգամ այն շրջանակել հայ-ադրբեջանական համատեքստում և նպաստել հայերի, ադրբեջանցիների ու Հարավային Կովկասի բոլոր քաղաքացիների համար ավելի լավ հասարակության կառուցմանը:

Հայ-ադրբեջանական նոր երկխոսության շրջանակում գործող Արդյունավետ կառավարման հարցերով թեմատիկ խմբի նախագահողը, փոխնախագահողը և անդամները պատրաստակամ են շարունակել իրենց աշխատանքն այս կարևոր թեմայի շուրջ:

Բարեվարքության և արդյունավետ կառավարման հարցերով թեմատիկ խմբի նախագահող, փոխնախագահող և անդամներ

Հայ–ադրբեջանական նոր երկխոսության թեմատիկ խմբեր

Շրջակա միջավայրի հարցերով թեմատիկ խմբի զեկույց

Ֆիդան Նամազովա (նախագահող, Ադրբեջան)

Աղավնի Հարությունյան (փոխնախագահող, Հայաստան)

This is an informal translation of the report. The authoritative text is the English version agreed by the Armenian and Azerbaijani members of the thematic group, as published on commonspace.eu.

Սա զեկույցի ոչ պաշտոնական թարգմանությունն է: Պաշտոնական տեքստը անգլերեն տարբերակն է, որը համաձայնեցվել է թեմատիկ խմբի հայ և ադրբեջանցի անդամների կողմից և հրապարակվել commonspace.eu կայքում:

Նոյեմբեր, 2025 թ.

Նախաձեռնող՝ Լինքս Եվրոպա (ԵՄ-ն հանուն խաղաղության 3 ծրագրի շրջանակում)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ

Ամսաթիվ՝ Նոյեմբեր, 2025 թ.

Նախաձեռնող՝ Լինքս Եվրոպա (ԵՄ-ն հանուն խաղաղության 3 ծրագրի շրջանակում)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ

Շրջակա միջավայրի հարցերով թեմատիկ խումբ

Հեղինակներ Հայաստանից

Աղավնի Հարությունյան (փոխնախագահող)

Օլեգ Դուրգարյան

Էմմա Անախասյան

Լուսինե Համբարյան

Հռիփսիմե Քոչարյան

Հեղինակներ Ադրբեջանից

Ֆիդան Նամազովա (նախագահող)

Տոկայ Ահմադով

Այգյուն Գուրբանովա

Անար Վալիև

Հաջար Հուսեյնովա

Շրջակա միջավայրի հարցերով թեմատիկ խմբի զեկույց

Ներածություն

Հարավային Կովկասն աշխարհի ամենաբազմազան էկոհամակարգեր ունեցող, սակայն կլիմայական փոփոխությունների հանդեպ միաժամանակ ամենախոցելի տարածաշրջաններից է: Հարավային Կովկասի երկրները, այդ թվում՝ Հայաստանն ու Ադրբեջանը, լուրջ փսասներ են կրել կլիմայական վտանգներից, ներառյալ ծովի մակարդակի բարձրացումը, ջրհեղեղները, սուր երաշտները, ջերմային ալիքները և այլն: Այս ազդեցություններն էլ ավելի են սրվում արագ ուրբանիզացիայի և շրջակա միջավայրի դեգրադացիայի հետևանքով: Արտանետումների թույլ վերահսկողությունը, ինչպես նաև արդյունաբերական գործունեությունը երկու երկրներում էլ հանգեցնում են օդի աղտոտվածության (Iqair.com, 2025թ.):

Հայաստանը և Ադրբեջանը, իրենց կտրուկ տարբերվող բարձրություններով և լանդշաֆտներով՝ կիսաանապատներից ու բերրի հովիտներից մինչև բարձրլեռնային անտառներ ու ալպիական մարգագետիններ, զգալի էկոլոգիական սթրես են ապրում արագ փոփոխվող եղանակի պատճառով: Ադրբեջանում ջրի սակավության ճգնաժամը հասել է օրհասական կետի, մինչդեռ Կասպից ծովը ենթարկվում է կտրուկ նահանջի: Միևնույն ժամանակ, Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ՝ անտառահատումների, անապատացման, ինչպես նաև կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքով: Հարցումները ցույց են տալիս, որ բնակչությունը, հատկապես երիտասարդությունը, մտահոգված չէ բնապահպանական խնդիրներով և կլիմայի փոփոխությունը չի դիտարկում որպես գլոբալ և տեղական արտակարգ իրավիճակ:

Անցյալ տարի Բաքվում հյուրընկալված COP29-ը «Կլիմա, խաղաղություն և անվտանգություն» թեմայով հիմնականում կենտրոնացավ կլիմայի ֆինանսավորման ու կլիմայի փոփոխության դեմ պայքարում զարգացող երկրներին աջակցելու վրա: 2026 թվականի մայիսին Բաքուն կհյուրընկալի Համաշխարհային քաղաքային համաժողովը՝ «Ապահովել աշխարհը բնակարանով. անվտանգ և դիմակայուն քաղաքներ ու համայնքներ» թեմայով: Համաժողովը կարող է բեկումային դառնալ

Հայաստանի և Ադրբեջանի համար՝ դիտարկելու շրջակա միջավայրի դեգրադացիայի, գերբնակեցման, ուրբանիզացիայի և կլիմայական հարմարվողականության խնդիրները։

Միևնույն ժամանակ, առաջիկա COP17-ը (Երևան, հոկտեմբեր 2026թ.) կկենտրոնանա կենսաբազմազանության պահպանման համաշխարհային նպատակների առաջմղման վրա՝ ապահովելով կարևոր հարթակ Կովկասի տարածաշրջանային կենսաբազմազանության թեժ կետերի քննարկման համար, որտեղ շրջակա միջավայրի վատթարացումը սպառնում է էնդեմիկ տեսակներին և էկոհամակարգերին թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում։ Հատկանշական է, որ երկու երկրներին էլ հաջողվել է դրամաշնորհներ և միջոցներ ներգրավել Կլիմայի հարմարվողականության հիմադրամից (CAF)՝ կլիմայի փոփոխության բացասական հետևանքներին դիմակայելու համար։

Հղում անելով Երևանում և Բաքվում կայանալիք այս նշանակալի հանդիպումներին՝ սույն զեկույցը կամրջում է տեղական բնապահպանական մտահոգությունները համաշխարհային երկխոսությունների հետ՝ շեշտադրելով, թե ինչպես կրթությունը և հարմարվողականության միջոցառումները կարող են աջակցել խաղաղության գործընթացներին՝ միաժամանակ հասցեագրելով տարածաշրջանի հրատապ կլիմայական խնդիրները։ Մենք դիտարկում ենք բնապահպանական կրթության և կլիմայի փոփոխության հարմարվողականության հնարավոր նախաձեռնությունները, որոնք կարող են խթանել անդրսահմանային համագործակցությունը, մեղմել ընդհանուր էկոլոգիական սպառնալիքները և նպաստել տարածաշրջանային կայունությանը՝ ընթացիկ աշխարհաքաղաքական լարվածության պայմաններում։

Քաղաքականության հանձնարարականների նպատակն է ույց տալ, թե ինչպես բնապահպանական իրազեկվածության վրա հիմված և կլիմայական ուղղվածություն ունեցող դիվանագիտությունը կարող է փոխադարձ օգուտներ բերել տարածաշրջանում էկոլոգիական դիմակայունության և հաշտեցման համար։ Գիտելիքի փոխանակման և հարմարվողականության համատեղ ծրագրերի միջոցով Հայաստանն ու Ադրբեջանը հնարավորություն ունեն բնապահպանական խոցելիությունները վերափոխել կայուն խաղաղության խթանիչների։

Նախապատմություն

Սույն հուշագրում մենք առաջարկում ենք դիտարկել բնապահպանական կրթությունը և կլիմայի փոփոխության հարմարվողականությունը երկու երկրների էկոհամակարգերում՝ որպես ազգային և տեղական խնդիրների լուծման տարբերակներից մեկը, ինչպես նաև խաղաղաշինության գործընթացի բաղկացուցիչ մաս: Կրթությունը մարդկանց մտածողությունը փոխելու ամենահզոր գործիքներից մեկն է: Համարվում է, որ խաղաղության կրթությունը հատկապես կարևոր է հակամարտություններից տուժած հասարակություններում փոփոխություններ բերելու համար: Այս տեսանկյունից, բնապահպանական կրթությունը՝ որպես խաղաղության կրթության մաս, կարող է կարևոր նշանակություն ունենալ հասարակությունների համար՝ հակասությունների հանգույցը քանդելու գործում:

Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) բնապահպանական կրթություն է տրամադրում Կենսաբանության և Աշխարհագրության ու երկրաբանության ֆակուլտետների մասնագիտացված ծրագրերի միջոցով: Համալսարանը մասնագետներ է պատրաստում «Շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների կայուն կառավարում» մագիստրոսական ծրագրով: Համալսարանի բոլոր ֆակուլտետներում, բակալավրիատի շրջանակներում, գործում է «Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության հիմունքներ» պարտադիր մասնագիտական դասընթացը. բացի այդ, դպրոցներն ունեն էկոլոգիա և կենսաբանություն ներառող առարկաներ: Ադրբեջանում նույնպես գոյություն ունեն դպրոցական առարկաներ, բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրեր՝ ուղղված բնապահպանական կրթությանը, ինչպիսիք են՝ Էկոլոգիան, կենսաբանությունը, ինչպես նաև կայուն զարգացման և շրջակա միջավայրի պահպանության դասընթացները: Օրինակ՝ Բաքվի պետական համալսարանի (ԲՊՀ) Էկոլոգիայի և հողագիտության ֆակուլտետը տրամադրում է բակալավրի, մագիստրոսի և դոկտորի աստիճանի մասնագիտացումներ կենսաբազմազանության և բնության պահպանության, շրջակա միջավայրի մոնիթորինգի և այլ ոլորտներում: Չնայած գոյություն ունեցող բնապահպանական ուղղվածությամբ ֆորմալ և ոչ ֆորմալ ծրագրերին՝ երկու երկրներում դեռևս կա զգալի բաց և լայն հասարակության համար բնապահպանական

կրթության զարգացման ու ամրապնդման անհրաժեշտություն։ Սրա նպատակն է սերմանել խաղաղության և համագործակցության կարևորությունը ոչ միայն քաղաքական տեսանկյունից, այլև բնապահպանական, որը չեզոք է և ծառայում է բոլորի բարօրությանը։

Բնապահպանական կրթությունը՝ որպես վերահսկողական մեխանիզմ, էական դեր է խաղում խաղաղաշինության գործընթացում։ Թե՛ դպրոցներում ու համալսարաններում դասավանդումը, թե՛ հասարակության իրազեկումն ու համոզումը տարբեր գործիքների միջոցով, ինչպիսիք են զանգվածային լրատվամիջոցները և մշակութային միջոցառումները, դիտարկվում են որպես այդ գործընթացի մաս։ Բացի այդ, ընդհանուր կրթական հենք ունենալը կհանգեցնի նրան, որ մեծահասակների մեծամասնությունը հասարակության մեջ կունենա ընդհանուր արժեքներ, համոզմունքներ և մոտեցումներ։ Հատկանշական է, որ բնապահպանական կրթությունը կարող է արդյունավետ լինել, եթե ուսումնական ծրագրերը, դասագրքերը և հարակից այլ նյութերը վերանայվեն և աջակցեն ընթացող խաղաղության գործընթացին։ Բնապահպանական կրթությունը՝ որպես խաղաղության կրթության մաս, օգնում է հարթել փսասված հարաբերությունները, քանի որ այն ուսուցանում է հակամարտությունների լուծման հմտություններ, բանակցություններ, խաղաղության վերականգնում և այլն:

Վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանում և Ադրբեջանում գրանցվել են միջին ջերմաստիճանի բարձրացում, տեղումների օրինաչափությունների փոփոխություն, ինչպես նաև ավելի հաճախակի դարձած երաշտներ ու ծայրահեղ եղանակային երևույթներ: Այս կլիմայական ճնշումները վերափոխում են էկոհամակարգերը՝ սպառնալով կենսաբազմազանությանը և մարտահրավեր նետելով այն համայնքներին, որոնց ապրուստի միջոցները կախված են բնական պայմաններից։

Հայաստանում միջին ջերմաստիճանը 20-րդ դարի կեսերից ի վեր բարձրացել է ավելի քան 1,3°C-ով, ինչն ուղեկցվում է տեղումների քանակի նվազմամբ և երաշտների, անտառային հրդեհների ու հողերի էրոզիայի աճող վտանգներով։ Անտառային և լեռնային էկոհամակարգերը, որոնք Հայաստանի կենսաբազմազանության հիմասյունն են, ամենաշատ տուժածներից են։ Ավելի չոր պայմանները հանգեցնում են

կիսաանապատային գոտիների ընդարձակմանը՝ ճնշում գործադրելով հարավի և հարավ-արևելքի անտառների վրա և մեծացնելով փսասատուների ու հիվանդությունների տարածումը: Ջրի սակավությունը, հատկապես ամառային ամիսներին, սպառնում է գետերին, հանդերին և Սևանա լճին՝ երկրի քաղցրահամ ջրի կարևորագույն պաշարներից մեկին: Այս փոփոխությունները նաև նվազեցնում են էկոհամակարգային ծառայությունները, ինչպիսիք են ջրային կարգավորումը, հողի բերրիությունը և արոտավայրերի բերրիությունը, որոնք էական նշանակություն ունեն գյուղական բնակչության ապրուստի համար: Գիտակցելով այս մարտահրավերները՝ Հայաստանը սկսել է էկոհամակարգերի վրա հիմված հարմարվողականությունը ներառել պետական քաղաքականության և տեղական գործողությունների մեջ: Կառավարության Հարմարվողականության ազգային ծրագիրը (2021-2026թթ.) որպես հիմական առաջնահերթություններ սահմանում է էկոհամակարգերի վերականգնումը, անտառների կառավարումը և հողերի կայուն օգտագործումը: ՄԱԶԾ-ի, Համաշխարհային էկոլոգիական հիմադրամի և Կլիմայի կանաչ հիմադրամի կողմից աջակցվող նախաձեռնությունները կենտրոնացել են լեռնային անտառային էկոհամակարգերի դիմակայունության ուժեղացման վրա՝ անտառվերականգնման, հրդեհների կանխարգելման համայնքահեն միջոցառումների և փսասատուների դեմ պայքարի բարելավված մեխանիզմների միջոցով: Այլ ծրագրեր խթանում են կենսաբազմազանության թեժ կետերի պահպանությունը, էկոլոգիական կապակցվածությունը, ինչպես նաև կանաչ ենթակառուցվածքների և քաղաքային կանաչապատման ինտեգրումը այնպիսի քաղաքներում, ինչպիսին է Երևանը՝ շոգը մեղմելու և կենսապահովման պայմանները բարելավելու նպատակով:

Ադրբեջանում նույնպես նկատվում են նմանատիպ միտումներ: Երկրի էկոհամակարգերը՝ Կասպից ծովի ափամերձ շրջաններից մինչև Մեծ ու Փոքր Կովկասի լեռները, գտնվում են թե՛ անապատացման, թե՛ հիդրոլոգիական անկայունության ճնշման տակ: Տեղումների նվազումը, սառցադաշտերի նահանջը և գետերի հոսքի կրճատումն արագացնում են անապատացումը, հատկապես կիսաչորային ցածրավայրերում, մինչդեռ այնպիսի ծայրահեղ երևույթներ, ինչպիսիք են ջրհեղեղները, սողանքները

և սելավները, դառնում են ավելի հաճախակի։ Ափամերձ էկոհամակարգերը բախվում են լրացուցիչ սպառնալիքի. Կասպից ծովի մակարդակի տատանումները փոփոխում են հանդերը, հանգեցնում հողերի աղակալման և վտանգում չվող տեսակների համար կենսական նշանակություն ունեցող բնակավայրերը։ Այս ռիսկերին դիմակայելու նպատակով Ադրբեջանն առաջ է մղել իր Հարմարվողականության ազգային ծրագրի գործընթացը՝ առաջնահերթություն տալով ջրային պաշարներին, գյուղատնտեսությանը և էկոհամակարգերի դիմակայունությանը։ Կառավարությունը, ՄԱԶԾ-ի և Կլիմայի կանաչ հիմադրամի աջակցությամբ, հզորացնում է կլիմայական ռիսկերի կառավարման ինստիտուցիոնալ կարողությունները և խթանում էկոհամակարգերի վրա հիմված էրոզիայի վերահսկողությունը լեռնային արոտավայրերում և գետավազաններում։ Անտառվերականգնումը, արոտավայրերի կայուն օգտագործումը և դեգրադացված հողերի վերականգնումը հարմարվողականության հիմական միջոցառումներն են։ Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ագրոկենսաբազմազանության պահպանմանը, ինչպես նաև ծովի մակարդակի փոփոխությունից տուժած հանդերի և ափամերձ տարածքների պաշտպանությանը։

Քաղաքականության տարբերակներ

Ադրբեջանում և Հայաստանում կան բազմաթիվ նախաձեռնություններ, որոնք ուղղված են խաղաղության գործընթացին։ Այս բոլոր նախաձեռնությունները, ներառյալ հակամարտությունների ուսումնասիրման դպրոցները, ամառային ճամբարները կամ վերապատրաստումները, հիմականում թիրախավորում են քաղաքական համակեցության, վստահության վերականգնման և փոխըմբռնման հարցերը։ Գոյություն չունեն ծրագրեր կամ նախագծեր, որոնք կարող են միավորել երկու կողմերի երիտասարդներին և փորձագետներին բնապահպանական կրթության կամ կլիմայական հարմարվողականության հարցերի շուրջը։ Հետևաբար, մենք առաջարկում ենք նախաձեռնել ոչ ֆորմալ կրթական մի քանի ծրագիր, որոնք կարող են բարձրացնել բնապահպանական իրազեկվածությունը։

- **Սահմանամերձ շրջանների և համայնքների տեխնիկական ու ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում՝ կառավարման**

պլանավորման մշակման նպատակով, հատուկ ուշադրություն դարձնելով կլիմայի փոփոխության հարմարվողականությանը: Այլ կերպ ասած՝ սահմանամերձ շրջաններում գտնվող գյուղերն ու քաղաքները պետք է մշակեն վաղ ազդարարման համատեղ համակարգեր, արտակարգ իրավիճակների պլաններ և տեխնիկական փաստաթղթեր՝ կլիմայի փոփոխության ազդեցությունը մեղմելու համար:

- **Ամառային դպրոց բնապահպանական մարտահրավերների վերաբերյալ:** Այս նախաձեռնությունը կարող է համախմբել համալսարանների տարբեր ֆակուլտետների (հիմնականում աշխարհագրության, բնապահպանության, գյուղատնտեսության և այլն) ուսանողներին՝ մի քանի շաբաթ շարունակ համատեղ աշխատելու տարածաշրջանի բնապահպանական խնդիրների շուրջը: Ուսանողներն ու փորձագետները կարող են միասին դիտարկել ընդհանուր խնդիրները և առաջարկել լուծումներ, ինչպես նաև մշակել առկա մարտահրավերների բնապահպանական, սոցիալական և տնտեսական ռիսկերի տարբեր սցենարներ ու գնահատականներ:
- **Արտերկրյա առցանց մոդուլ:** Բնապահպանական խնդիրների վերաբերյալ դասընթացը կարող է առաջարկվել ԱՄՆ-ի կամ ԵՄ-ի համալսարաններից մեկի կողմից՝ հնարավորություն տալով ադրբեջանցի և հայ երիտասարդներին հասկանալ էկոլոգիական խնդիրները և համաշխարհային հանրության կողմից առաջարկվող լուծումները: Այս դասընթացը կարող է տևել մեկ կիսամյակ և տրամադրել համալսարանների կողմից ընդունելի կրեդիտներ:
- **Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածաշրջանային և պետական գործընկերության, ինստիտուցիոնալ և իրավական շրջանակների, հետազոտական համագործակցության և գիտելիքի կառավարման մեխանիզմների բարելավում:** Սա կարող է ներառել տվյալների հավաքագրում տեղումների, եղանակային ծայրահեղ երևույթների (ջրի մակարդակի բարձրացումներ, փոթորիկներ, երաշտներ), ինչպես նաև ալպիական և ենթալպիական արոտավայրերի կրճատման վերաբերյալ, ինչն, իր հերթին, ազդում է գյուղատնտեսության և կենսաբազմազանության վրա, կխորացնի

բնակչության աղքատության խնդիրները և կմեծացնի եղանակային ծայրահեղ երևույթների՝ երաշտների ու ջրհեղեղների ինտենսիվությունն ու հաճախականությունը։

Առաջարկություններ

Վերը նշված բոլոր տարբերակները թվում են հնարավոր և իրագործելի։ Այնուամենայնիվ, երկու երկրներն էլ պետք է ձգտեն էլ ավելի ամրապնդել իրենց բնապահպանական հարաբերությունները։ Երկու երկրներն էլ կլիմայի հարմարվողականության և բնապահպանական կրթության ոլորտում որոշակի փորձ ունեն։ Հետևաբար, հաջորդ քայլը կարող են լինել համատեղ նախաձեռնությունները, որոնք կներդաշնակեցնեն տեղական քաղաքականությունները և կգրավեն միջազգային կազմակերպությունների ուշադրությունը՝ որպես մեկ միասնական տարածաշրջան, այլ ոչ թե որպես առանձին երկրներ։ Այս բոլոր նախաձեռնությունները կարող են դառնալ **Տարածաշրջանի տեսլական 2040**-ի բաղկացուցիչ մասը։

Առաջարկ՝ կարճաժամկետ իրագործման համար

Բնապահպանական կրթության համատեղ նախաձեռնություններ՝ համագործակցություն միջազգային կազմակերպությունների, Հայաստանի և Ադրբեջանի (ինչպես նաև Վրաստանի) միջև՝ ռեսուրսներ հատկացնելու և այնպիսի ծրագրեր կազմակերպելու համար, ինչպիսին է Բնապահպանական մարտահրավերների ամառային դպրոցը: Այս ծրագրերը պետք է ներառեն խաղաղության սկզբունքները, օրինակ՝ հակամարտությունների լուծումը, խմբերի միջև շփումը խթանելու և նախապաշարմունքները նվազեցնելու համար՝ նպաստելով կայուն թիմային աշխատանքին և ընդհանուր պատասխանատվությանը հանուն տևական խաղաղության: Հետագայում այն կարող է վերածվել անդրսահմանային էկոլոգիական խնդիրների վերաբերյալ հավատարմագրված կիսամյակային դասընթացների, որոնք կճանաչվեն ազգային համալսարանների կողմից՝ զարգացնելով իրազեկվածություն, գիտելիք և մոտիվացիա՝ հանուն տարածաշրջանային ներդաշնակության ու գիտահեն երկխոսության: Բացի այդ, երեք երկրների ուսանողների համատեղ կրթական այցերը կարող են ծառայել վստահության ամրապնդմանը և անդրսահմանային փոխըմբռնմանը: Այս կրթական

նախաձեռնությունը կարող է ներառել ոչ միայն ֆորմալ կրթությունը, այլև դասընթացներ ու սեմինարներ համապատասխան նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տեղական համայնքների համար:

Առաջարկ՝ երկարաժամկետ իրագործման համար

- **Կլիմայի հարմարվողականության համատեղ նախաձեռնություն:** Հարավային Կովկասի բոլոր երեք երկրները կարող են դիմել Կլիմայի հարմարվողականության հիմնադրամին համատեղ դրամաշնորհների համար՝ օգնելու երկրներին.
    - բարելավել տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողությունները՝ երկարաժամկետ պլանավորման և կլիմայական գործողությունների համար,
    - անցում կատարել դեպի կանաչ տնտեսություն, իրականացնել և պահպանել հարմարվողականության նախաձեռնություններ, ինչպես նաև ընդլայնել լուծումները երկու երկրների սահմանակից համայնքներում:

  Այս ֆինանսավորումը կարող է օգտագործվել սահմանամերձ շրջանների և համայնքների տեխնիկական ու ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման համար՝ կառավարման պլանավորման մշակման նպատակով՝ հատուկ ուշադրություն դարձնելով կլիմայի փոփոխության հարմարվողականությանը:

- **Համատեղ բնապահպանական խմբի ստեղծում:** Երկկողմ բնապահպանական խմբերի ստեղծում և գիտական տվյալների ու տեխնոլոգիաների փոխանակում: Նման նախաձեռնությունը ոչ միայն կնպաստի շրջակա միջավայրի վերականգնմանը և կլիմայի փոփոխության մարտահրավերների լուծմանը, այլև կարևոր քայլ կլինի ժողովուրդների միջև վստահության ամրապնդման գործում: Բնապահպանական կրթությունը կլիմայի փոփոխության հարմարվողականության հետ մեկտեղ կարող է դառնալ չեզոք և միավորող հարթակ՝ համագործակցության նոր ձևաչափ ստեղծելու համար, որը հիմված կլինի փոխադարձ պատասխանատվության, թափանցիկության և կայուն ապագայի նկատմամբ ընդհանուր հանձնառության վրա:

Լինքս Եվրոպա հիմնադրամի մասին

Լինքս Եվրոպա հիմնադրամը հիմնադրվել է 2019 թվականի փետրվարին՝ ապահովելու և ամրապնդելու եվրոպական հենքը մի շարք նախաձեռնությունների և նախագծերի համար, որոնք առնչվում են եվրոպական խաղաղությանն ու անվտանգությանը, ինչպես նաև Եվրոպական միության հարաբերություններին արևելյան և հարավային հարևան տարածաշրջանների հետ: Սրանցից մի քանիսը եղել են Լինքս ցանցի աշխատանքի այցեքարտը՝ 1997 թվականին Լոնդոնում դրա հիմնադրումից ի վեր:

Իր գրասենյակներից, որոնք գտնվում են Հաագայում՝ Խաղաղության և արդարադատության քաղաքում, Լինքս Եվրոպան օգտագործում է գործիքների համախումբ՝ իր նպատակներին հասնելու համար: Դրանք տատանվում են երկխոսության ավանդական մեթոդաբանություններից մինչև վստահության ամրապնդման նորարարական միջոցառումներ և հետազոտության, վերլուծության, իրազեկման ու հաղորդակցության նորագույն գործիքներ:

Մենք շարունակում ենք զարգացնել մեր մոտեցումները վստահության ամրապնդման միջոցառումների վերաբերյալ՝ որպես տարբեր համատեքստերում խաղաղության հաստատման և պահպանման կարևոր գործիք: Մենք աշխատում ենք միջազգային հարաբերություններում առկա խնդիրների մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ: Ավելի լավ իրազեկված քաղաքացիներն ավելի քիչ հավանական է, որ զոհ դառնան ապատեղեկատվությանը կամ պոպուլիզմին: Անհրաժեշտության դեպքում մենք նաև ձգտում ենք առաջարկել անվտանգ հարթակ, որտեղ տարբեր կարծիքներ կարող են հնչեցվել և քննարկվել:

Իմացեք ավելին մեր կայքում
www.links-europe.eu

Կապ
office@links-europe.eu

Ֆլյուվելեն
Բուրգվալ 58 2511CJ
Հաագա
Նիդերլանդներ

Լանգե Ֆորհաուտ
43 2514 EC
Հաագա
Նիդերլանդներ